ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 55-Ա

«28» ապրիլի 2021 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՄԵՂՐԱՇԱՏ) ՔԱՂԱՔԱՑԻ ՂՈՒԿԱՍ ՍՐԱՊԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ (ԱՆԱՍՆԱԳՈՄ) ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 20-ի թիվ 26-Ա որոշումը և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Ղուկաս Սրապի Մանուկյանը, իր 2021 թվականի ապրիլի 21 -ի դիմումով, ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը համարված **345,24** քառակուսի մետր արտաքին մակերեսով գյուղատնտեսական արտադրական նպատակային նշանակության շինությունը (գործառնական նշանակությունները՝ անասնագոմ, հանգստի սենյակ) և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշնակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-082-0004-0019 կադաստրային ծակագրով **0.08926** հեկտար մակերեսով հողամասի (հասցեն՝ մարզ Շիրակ, Ամասիա համայնք, գյուղ Մեղրաշատ 1-ին փողոց 1-ին փակուղի, թիվ 4) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը համարված **345.24** քառակուսի մետր արտաքին մակերեսով գյուղատնտեսական արտադրական նպատակային նշանակության շինությունը (գործառնական նշանակությունները՝ անասնագոմ, հանգստի սենյակ) և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշնակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-082-0004-0019 կադաստրային ծակագրով **0.08926** հեկտար մակերեսով հողամասը (հասցեն՝ մարզ Շիրակ, Ամասիա համայնք, գյուղ Մեղրաշատ 1-ին փողոց 1-ին փակուղի, թիվ 4) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի կարգով **498659 (չորս հարյուր իննսունութ հազար վեց հարյուր հիսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ,** արժեքով վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Ղուկաս Սրապի Մանուկյանին (նույնականացման քարտ 3607680140, տրված՝ 19.07.2017 թ. 008-ի կողմից, բնակության հասցե՝ ք. Երևան, Ծերենցի փողոց, շենք 5, բն.1/1) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

2. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ քաղաքացու միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«28» ապրիլի 2021թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 56-Ա

«30» ապրիլի 2021 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱՍԻԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ, ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱՎԻՐԻ ԼԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետի, 48-րդ և 50-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Ռուզաննա Արշավիրի Լազարյանի դիմումը

ո ր ո շ ու մ եմ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում տեղակայված Ռուզաննա Արշավիրի Լազարյանի սեփականություն հանդիսացող, 0,1188 հեկտար մակերեսով անշարժ գույքի հասցեավորումը սահմանել հետևյալ կերպ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայր, 4-րդ փողոց , թիվ 11 հողամաս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«30» ապրիլի 2021 թվական
գյուղ Ամասիա